

ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ԶԼՄ-ՈՒՄ

Ջանգվածային լրատվամիջոցում լուսաբանվող յուրաքանչյուր իրադարձություն բնորոշվում է արժևորման նշույթավորմամբ: Անվանելով տնտեսական իրադարձությունը նշույթավորված լեզվամիավորով, որը ներունակորեն պարունակում է մի ամբողջական դատողություն, հոդվածի հեղինակն այդ իրադարձությունը գնահատում է ըստ տվյալ հասարակությանը հարիր արժեհամակարգի և կարծրատիպերի: Այսպես լրագրողը նախապես սահմանում է ընթերցողի՝ տվյալ իրադարձության հետ կապված տեղեկության ընկալումը: Տնտեսական իրողությունների գնահատման առավել բնորոշ սանդղակներն են կարևորության, օգտակարության/արդյունավետության, կայունության/անկայունության, չափի, կարգի, իրատեսության/հավանականության, խոհամտության, հարաշարժության, հուզական երանգավորման չափանիշները:

Հիմնաբառեր. տնտեսական իրադարձություն, տնտեսական իրադարձության արժևորում, գնահատման սանդղակ, արժևորման լեզվաարտահայտչական միջոցներ

Ջանգվածային լրատվամիջոցներում լուսաբանվող իրադարձությունները բնորոշվում և շարադրվում են լրագրողի կողմից արդեն իսկ որոշակի նշույթավորմամբ: Ցանկացած իրադարձություն մեկնարկում է թեմայի անվանմամբ՝ վերնագրով, որը նշում է եղելությունը, ինչպես նաև դրա հետևանքները, ունի որոշակի հուզարտչահայտական երանգ: Այնուհետև քննարկվում են իրադարձության մանրամասները, նշվում են մասնակիցները, տեղը և ժամանակը, մեկնաբանվում են պատճառները, որոնք, ընդհանուր

առմամբ, ապահովում են հենքային գիտելիք տվյալ իրադարձության վերաբերյալ: Այսպիսով՝ զանգվածային լրատվամիջոցը ուշագրավ է դարձնում իրադարձությունը՝ ի սկզբանե ընթերցողի համար ստեղծելով գնահատման որոշակի հարթակ, նախասահմանելով վերջինիս տրամադրվածությունը իրադարձության նկատմամբ:

Մեր նպատակն է ուսումնասիրել արժևորման նշույթավորումը տնտեսական իրողություններում և սահմանել նշույթների տարատեսակները, որոնք առավել բնորոշ են տնտեսական փոփոխությունների ընկալման գործընթացին:

Լեզվի իմաստաբանական համագործածական կարևորագույն հասկացությունը՝ արժևորումը, սերտորեն կապված է իրադարձության հետ:

Ն. Հարությունովան արժևորումն անմիջականորեն կապում է նորմայի՝ բարոյական, էթիկական, գեղագիտական չափանիշների հետ: Արժևորումը համամարդկային արժեքների համակարգի և օբյեկտիվ կամ երևակայական իրականության նկատմամբ անհատական ձգտումների փոխազդեցությունն է¹: Հաղորդագրություն ուղարկողը արժևորման օգնությամբ իր արտահայտությունը հարաբերակցում է ոչ միայն նորմի, այլև ընդհանրապես առարկայի գոյության կամ դրա բացակայության հետ²:

Արժևորման՝ որպես եղանակավորման ձևերից մեկի ընկալումը հատուկ է Ե. Վոլֆի աշխատություններին. գիտնականը դա սահմանում է որպես յուրատեսակ եղանակավորող շրջանակ, որը վերագրվում է արտահայտության նկարագրական բովանդակությանը և չի համընկնում դրա ոչ տրամաբանափմաստաբանական, ոչ էլ շարահյուսական կառուցվածքին: Արժևորման եղանակավորման հիմքում $A \neq B$ բանաձևն է, որտեղ A -ն արժևորման սուբյեկտն է (բացահայտ կամ ոչ բացահայտ անձ՝ սոցիում, որի տեսանկյունից է տրվում գնահատականը), B -ն՝ օբյեկտը, առարկան, իրադարձությունը, իրերի դրությունը, r -ը՝ գնահատողական վերաբերմունքը, որը «լավ/վատ» արժեքն ունի: Այսպիսով՝ արժևորման եղանակավորման հիմնական տարրերն են սուբյեկտը և օբյեկտը: Բացի դրանից, արժևորման եղանակավորող շրջանակի մեջ, որպես կանոն, ոչ բացահայտորեն մտնում են արժևորման սանդղակը և կարծրատիպերը, որոնք համապատասխանում են խոսողների սոցիալական պատկերացումներին³:

Արժևորման հասկացության ուսումնասիրության տարբեր մոտեցումներում առավել հետաքրքրական է գործաբանական եղանակը՝ կապված հասցեատիրոջ վրա ներգործության հետ: Այս դեպքում արժևորումն արտացոլում է նշանային իրադրության գործաբանական տեսանկյունը⁴: Ուղղակիորեն կապված լինելով խոսող սուբյեկտի հետ և արտացոլելով նրա ճաշակն ու հետաքրքրությունները՝ արժևորումը սերտորեն շաղկապված է խոսքային ակտի հաղորդակցական նպատակին: Ըստ Սթիվենսոնի՝ արժևորման ազդեցությունը սահմանափակվում է հասցեատիրոջ հոգեբանական վիճակով: Ռ. Հեարը արժևորումը սահմանում է որպես մի երևույթ, որը վերաբերում է

¹ Տե՛ս **Арутюнова И.Д.**, Типы языковых значений: Оценка. Событие. Факт. М., «Наука», 1988:

² Տե՛ս **Владимирская Л.М., Хантакова В.М.**, Оценочный компонент в реализации коммуникативных интенций // Герценовские чтения. Иностранные языки. Материалы конференции. СПб.: Изд. РГПУ им. А.И. Герцена, 1998:

³ Տե՛ս **Вольф Е.М.**, Функциональная семантика оценки. М., «Наука», 1985, էջ 11-12:

⁴ Տե՛ս **Стивенсон Ч.**, Некоторые прагматические аспекты значения // НЗЛ. Вып. 16. М., «Прогресс», 1978:

որևէ ստանդարտի, կանոնի, նորմի՝ կիրառելի ոչ միայն տվյալ, այլև ուրիշ դեպքերում⁵: Արժևորումն ազդեցություն է այն իմաստով, որ խոսողը, ինչ-որ բան գնահատելով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներկայացնում է տվյալ օբյեկտը:

Հետազոտողները արժևորումը դիտարկում են նշալի նկարագրության հինգ մակարդակներում՝ գոյաբանական (լուծում է աշխարհում կողմնորոշման հարցերը. գոյաբանական արժևորման լեզվական նշույթներ են եղանակավորող բառերը՝ չափի իմաստաբանությամբ ու հնարավորության-հավանականության մոդուսով, և միավորները՝ քանակի արժեքով), էպիսթեմիկ (գնահատվում է դատողությունների ճշտության, իրականությանը համապատասխանության), ներկայացնող (արժևորվում է արտահայտվող մտքին վերաբերող նշանակությունների համապատասխանությունը), հուզական (դասակարգում է նշալիները հաճելի կամ տհաճ զգացումներ, հույզեր և ապրումներ առաջացնելու տեսանկյունից)⁶: Յուրաքանչյուր մակարդակ բավական ինքնատիպ է, բայց բոլորի համար ընդհանուրն այն է, որ «արժևորումը կարծիք է՝ իրերի և իրադարձությունների որակական կամ քանակական հատկանիշների մասին ենթադրությունից բարձր և կայունորեն հաստատված գիտելիքից ցածր ընդգրկման մեջ»⁷. Ընդ որում, արժևորման համակարգը կայուն գիտելիք չէ, իսկ դա նշանակում է, որ այն կարող է անհատից անհատ տարբերվել:

Արժևորումը, որպես նշանակության արժեքային հայեցակետ, գոյություն ունի լեզվական ամենատարբեր արտահայտություններում: Այն կարող է սահմանափակվել բառից ավելի փոքր տարրերով, կարող է բնութագրել և՛ բառախումբ, և՛ մի ամբողջ արտահայտություն: Կարելի է խոսել արժևորման առկայության մասին նույնիսկ արտահայտության մեջ գնահատող բառերի բացակայության պարագայում, օրինակ՝ հաջորդող համատեքստի կամ այն դեպքում, եթե նկարագրվում է իրադրություն, որը համապատասխան իմաստ ունի աշխարհի պատկերում⁸: Գիտնականների կարծիքով՝ հասցեատիրոջ համար կարևոր է ոչ թե արժևորող բառերի նշանակության ըմբռնումը, այլ դրանց մեկնաբանությունը, քանի որ մեկտեղ պիտի հաշվի առնվեն «գործնական բազմաթիվ իմպլիկացիաներ», ինչ-որ լրացուցիչ տեղեկություն, որը հիմնված է անհատի կենսափորձի վրա⁹: Որոշակի համատեքստում նույնիսկ բավական չեզոք բառերը կարող են արժևորման նշանակություն ստանալ: Որևէ հաղորդագրություն ուղարկելիս հարկավոր է հաշվի առնել նաև լսարանի կազմը, քանի որ տարբեր հասցեատերերի համար բառային միավորի արժևորման նշանակությունը կարող է զգալիորեն տարբերվել, ինչն ազդում է տեքստում շարադրված տեղեկության ընկալման և կարգայնացման վրա: Բառի ընկալումը կարող է պայմանավորված լինել հասցեատիրոջ՝ սոցիալական որևէ խմբի պատկանելու հանգամանքով, նրա տարիքային, գենդերային և այլ բնութագրերով:

⁵ Տե՛ս **Хэар П.М.**, Описание и оценка // ПЗЛ. - Вып. XVI. М., "Наука", 1985:

⁶ Տե՛ս **Никитин М.В.**, Заметки об оценке и оценочных значениях // Когнитивно-прагматические и художественные функции языка. Studia Linguistica 9. СПб., "Тригон", 2000:

⁷ **Никитин М.В.**, Основания когнитивной семантики. СПб.: Изд РГПУ им. А.И. Герцена, 2003, с. 66.

⁸ Տե՛ս **Малышева А.А.**, Категория "оценки" и категория "странности" в коммуникативно-прагматическом аспекте // Коммуникативные и номинативные аспекты единиц языка. Межвуз. сб. науч. трудов. Ленинград, ЛГПИ им. А.И. Герцена, 1989:

⁹ Տե՛ս **Папина А.Ф.**, Текст: его единицы и глобальные категории. М., УРСС, 2002, էջ 267:

Գնահատման նախադրական կառուցվածքում առանձնանում է չորս հիմնական բաղադրիչ՝ 1) արժևորման սուբյեկտ, 2) արժևորման օբյեկտ, 3) բնույթ, 4) հիմք¹⁰։ Իրական աշխարհում գոյություն ունեցող օբյեկտները սուբյեկտի կողմից գնահատվում են։ Դրանց միջև եղած հարաբերությունների բնույթը բացահայտվում է առարկաներին արժեք տալով կամ դրանք համեմատելով։ Սուբյեկտի համար գնահատման հիմք են համոզմունքները, իդեալի, տիպ-օրինակի զգացումը։ Օբյեկտ արժևորելով՝ սուբյեկտը, մի կողմից՝ հենվում է դրա նկատմամբ իր անհատական սուբյեկտիվ վերաբերմունքի, մյուս կողմից՝ համագգային կարծրատիպային պատկերացումների և գնահատականների սանդղակի վրա։

Այսպիսով՝ արժևորումն ուղղակիորեն կապված է կարծրատիպերի ըմբռնման հետ, որոնք ընկալվում են որպես կայուն պատկերացումներ, որոշակի մշակույթի կրող համապատասխան սոցիումին հատուկ «առօրեական ճշմարտություններ»¹¹։

Կարծրատիպերը, դատողության ձև ունենալով, բովանդակային առումով ստանդարտ պատկերացումներ են որոշակի իրադարձությունների, փաստերի, երևույթների, սոցիալական խմբերի կամ դրանց առանձին անձանց մասին։ Կարծրատիպը ընկալման գործընթացի և անհատների գիտակցության վրա ներգործության կարևոր օղակ է¹²։

Կարծրատիպի ներգործուն գործառույթը կարևոր նշանակություն ունի զանգվածային տեղեկատվության միջոցների համար, որոնք ձգտում են ազդեցություն գործել որքան հնարավոր է շատ մարդկանց կարծիքների ձևավորման և դիրքորոշումների վրա։

Արժևորման նպատակով օգտագործման տեսանկյունից՝ լեզվի ողջ բառապաշարը կարելի է բաժանել երեք դասի.

1. բառեր, որոնց ուղիղ իմաստը ոչինչ չի կանխորոշում խոսողների կողմից դրանցով նշանակված երևույթների նկատմամբ (տուն, գիրք). դա, այսպես կոչված, չեզոք բառապաշարն է,

2. բառեր, որոնց իմաստը գնահատական է պարունակում, սակայն չի նշվում, թե դա ինչին է վերաբերում (լավ, վատ),

3. բառեր, որոնցում առարկայական և գնահատող նշանակություններն ամուր շաղկապված են. դրանք, այսպես կոչված, պրագմենտներն են (քննադատել, հավանություն տալ և այլն)¹³։

Բառերի վերջին դասի առանձնահատկությունն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը ներունակորեն պարունակում է մի ողջ դատողություն և համոզման առանձնահատուկ ուժ, որը շատ անգամ իմպլիցիտ (ներակա) բնույթ է կրում։ Հետևաբար՝ այդպիսի բառերի օգտագործումը տեքստում ազդեցություն է գործում հասցեատիրոջ վրա, որը անքննաբար է ընդունում հեղինակի կողմից առաջարկված այս կամ այն իրադարձության արժևորումը։ Իրադարձության ներկայացումն այդպիսի բառերի օգնությամբ (հատկապես այնպիսի իրադարձության, որն առաջին անգամ է հիշատակվում) իր հետքն է թողնում

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 150։

¹¹ Տե՛ս **Донец П.Н.**, К типологии стереотипов // Социальная власть языка. Воронеж, Воронежский гос. ун.-т, 2001։

¹² Տե՛ս **Рыжков В.А.**, Стереотип как инструмент воздействия на сознание личности / Проблемы организации речевого общения / Отв. ред. Е.Ф. Тарасов. М., 1981։

¹³ Տե՛ս **Эпштейн М.Н.**, Идеология и язык (построение модели и осмысление дискурса) // Вопросы языкознания, 1991, №6։

կատարվող դեպքերի հետագա ընկալման վրա: Լեզվի հարստությունն ու բազմազանությունը թույլ են տալիս միևնույն իրադարձությունը անվանել ինչպես չեզոք բառով, այնպես էլ այնպիսի բառով, որը վառ արտահայտված բացասական կամ դրական իմաստ ունի: Դրական կամ բացասական իմաստով բառերը հասցեատիրոջ վրա ներգործության մեծ ուժ ունեն, քանի որ ազդում են անմիջականորեն մարդու հուզական աշխարհի վրա: Տեղեկությունը, որ հուզական լիցք է կրում, ավելի լավ է մտապահվում և մարդու կողմից մեծ մասամբ ընկալվում է անքնին. դա շատ հաճախ լրագրողների կողմից օգտագործվում է իրադարձությունները նկարագրելու համար:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական իրադարձության արժևորումը հիմնականում ընթանում է մի քանի տիպային գնահատող սանդղակներով, որոնցից, ըստ էության, ամենանշանակալիկն կարևորության չափանիշն է:

Կարևորության գործոնը չափազանց էական է տնտեսական իրադարձության համար, քանի որ վերջինս ցուցանում է ոչ թե պարզ փոփոխություն, այլ հանրության կողմից նշված փոփոխություն, որը դիտարկվում է որպես կարևոր, անսովոր, որոշակի ժամանակահատվածի համար սահմանված ցուցիչների և չափորոշիչների խախտում հանդիսացող երևույթ: Այս կապակցությամբ տեղին է բերել որոշ հետազոտողների կարծիքները, ովքեր իրենց առանձին դիտողություններով հաստատում են իրադարձության նկատմամբ այսպիսի մոտեցման օրինաչափությունը:

Այսպես օրինակ՝ Ռ.Մարտինը կարծում է, որ իրադարձությունները ենթադրում են որոշակի իրադարձության մեջ ներգրավված օբյեկտների հատկությունների նշանակալից կամ անսովոր փոփոխություններ¹⁴:

Իրադարձության գոյաբանության նկատմամբ այսպիսի մոտեցումը առավել ցայտուն է արտահայտված Ֆ.Դրեցկեի աշխատանքներում, ըստ որի՝ «իրադարձություն անվանում են այն, ինչը տեղի է ունենում, ինչը աչքի է զարնում և ինչ-որ պատճառով ուշադրության է արժանանում: Մենք հակված ենք կռիվը կամ թագադրությունը իրադարձություն համարելու, սակայն, ոչ ձեռքի շարժումը, որ մեկնվել է՝ աղ վերցնելու»¹⁵:

Անշուշտ, իրադարձության նշանակալիության տարրը նաև տնտեսական իրադարձության անքակտելի մասն է կազմում, քանի որ վերջինս այս կամ այն կերպ իր հետքն է թողնում հանրության վրա, մասնավորապես՝ դիտորդարժևորողի, որն ընկալում է երևույթը, որակավորում այն որպես տնտեսական աշխարհը փոփոխող իրադարձություն և համեմունք իր դատողություններով (լավ, վատ, ճիշտ, սխալ և այլն):

Այսպիսով՝ կարևորության արժևորումը արտահայտվում է նախևառաջ համապատասխան ածականներով: Օրինակ՝

In a sign of how important shoring up financial backing will be, the conservative political network headed by Charles and David Koch, the billionaire industrialists, has already said it expects to spend nearly \$900m to win the White House for a Republican in 2016. (The Financial Times, January 7, 2015)¹⁶

¹⁴ Տե՛ս **Martin R.M.**, On events and event-descriptions. Fact and Existence. Oxford, Basil Blackwell, 1969, էջ 71:

¹⁵ **Dretske F.**, Can events move? - Mind, 1967, vol.76, p. 481-482.

¹⁶ Այստեղ և հաջորդիվ վերլուծվել են հոդվածներ հետևյալ առցանց աղբյուրներից՝

Theresa May's plan to send home international students after they graduate has been quashed by chancellor George Osborne, amid warnings the move would cause serious damage to British universities and business. (The Financial Times, January 7, 2015)

And while the direct impact of a Fed increase may appear small, the indirect consequences – including on the Bank of England's thinking and the stock market – could be significant. (The Financial Times, September 9, 2015)

Getting rid of Japan's deflationary mindset is crucial to creating a self-sustaining cycle of consumption and further inflation. (The Financial Times, January 7, 2015)

The smartphone has become information technology's key product. It generates the most profits; it attracts the most capital and the brightest brains. (The Economist, February 28, 2015)

There is a major, unresolved debt problem. (The Financial Times, January 7, 2015)

Նշանակալի և կարևոր ընկերություններ ցուցանելու համար լրագրողը շատ անգամ կիրառում է գոյականներ, որոնց օգնությամբ ընթերցողն իսկույն պատկերացում է կազմում վերջիններիս կարգավիճակի մասին:

Igor Sechin, the boss of Russian oil behemoth Rosneft and one of the most powerful men in Russia, has declared European sanctions against his giant state-controlled organisation are an illegal affront to democracy. (Independent, February, 2015)

Այս դեպքում տեղեկանում ենք, որ «Ռոսնեֆտ» ընկերությունը ամենախոշորն է Ռուսաստանում՝ առաջին հերթին behemoth գոյականի առկայության շնորհիվ, որի սահմանումն է՝ something enormous in size or power: Հետևյալ հոդվածում, Google Shares Black Friday Location Data for Marketers վերնագրի ներքո, «Գուգլ» ընկերությունը բնութագրվում է որպես բացառիկ հզորության հսկա՝ giant բառի միջոցով, որի սահմանումն է՝ a person or thing of extraordinary power, significance, or importance:

Search Giant is opening up data for marketers, shoppers to see how busy stores are. (www.adage.com)

Տնտեսական իրողությունները հաճախ արժևորվում են օգտակարության, արդյունավետության տեսանկյունից, ինչպես հետևյալ օրինակներում՝

“EasyJet expects that lower fuel costs will be beneficial for its customers as fares adjust,” she said. (The Financial Times, January 28, 2015)

Low interest rates created an incentive for banks...The also made it profitable for such outfits to borrow and use the extra cash to amplify their investments. (The Economist, September 7, 2013)

It would be a shame to regulate away a useful market for smaller companies by insisting that every offering has a credit rating because retail investors cannot be trusted with investing their own money. (The Financial Times, September 9, 2015)

But if rates appear stable, investors will take the risk of borrowing in the money markets to buy longer-dated, higher-yielding securities. (The Economist, September 7, 2013)

Union officials say the changes will see Bournville jump from being one of the least competitive of Mondelez's European chocolate facilities to one of its most productive. (The Financial Times, January 31, 2015)

Qinetiq claims Q-Net - a Kevlar web suspended on frames attached to vehicles - is lighter and more effective than conventional armour. (The Financial Times, January 28, 2015)

Շատ անգամ տնտեսական աշխարհում կատարվող իրադարձությունները և իրադրությունները վերլուծվում են ապահով, կայուն կամ անկայուն լինելու տեսանկյունից, ինչպես հետևյալ օրինակներում՝

Investors sought out these securitized products because they appeared to be relatively safe while providing higher returns in a world of low interest rates. (The Economist, September 7, 2013)

It will have a robust system for countries to review and strengthen their emissions controls at regular intervals, starting in 2020. (The Economist, November 28, 2015)

If short-term interest rates are low but unstable, investors will hesitate before leveraging their bets. (The Economist, September 7, 2013)

The ruble's one-month implied volatility jumped to almost 90 at the beginning of January before paring the increase to 38 on Monday. That's still almost double the level of the next most volatile emerging-market currency, the Brazilian real. (Bloomberg, February, 2015)

Consumer spending formed the backbone of the brittle recovery in the run-up to the crisis in Ukraine and the oil price freefall in 2014. (Bloomberg, February, 2015)

These risky mortgages were passed onto financial engineers at the big banks, who turned them into supposedly low-risk securities by putting large number of them together in pools. (The Economist, September 7, 2015)

Տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները հաճախ դիտարկվում են չափերի տեսանկյունից՝

Online purchases are a greater percentage of retail in China than anywhere else. (www.adage.com)

"We continue to expect a small deficit by the end of the current parliament," it said in an update to financial markets. (www.theguardian.com)

Abandoning these subsidies would yield enormous benefits, to the public exchequer allowing it to refocus expenditure on more productive programmes, to the economy in reduced energy waste, and to human health, in reducing the deaths and costs associated with fossil fuel air pollution. (The Economist, November 28, 2015)

If your childhood happened between the mid-1970s and early 80s, you will probably recall a particularly miserable symbol of that era's reduced budgets and shrinking horizons: the broken-down, litter-strewn park. (www.theguardian.com)

This huge cut will happen, but it is part of a bigger plan. Since 2013, with some caveats, councils have kept half of the money they get from business rates, and carried on putting the rest into a centrally administered pot. (www.theguardian.com)

The high cost of R&D is used to explain why drugs giants merge, and why they must charge high prices. (The Economist, November 26, 2015)

Արժևորման մեկ այլ խումբ են կազմում բառայությունները, որոնք ցուցանում են իրադարձական փոփոխությունների կարգը որևէ շարքում, օրինակ՝ առաջին, ամենացածր, բարձր և այլն:

Leading countries in Latin America and around the world are showing how ambitious climate action is the right choice for both their citizens and their economies. (The Economist, November 28, 2015)

Tighter labour markets are already in evidence, with further data released yesterday showing an additional 380,000 jobs were created last month, from the same period a year earlier, pushing unemployment to its lowest level since 1997. (The Financial Times, February 1, 2015)

Venezuela is the world's fifth biggest subsidizer of fossil fuel use, at nearly \$40 billion annually, or nearly a tenth of its economic output, according to the IEA. (The Economist, November 28, 2015)

The dollar index, a gauge of the currency's value against a basket of rivals, was up 0.2 per cent and heading for its highest close in nine years. (The Financial Times, January 28, 2015)

The maximum tax relief will drop from 45% and 40% to just 20%, so that an investor with a :150,000 buy-to-let mortgage on a property worth :200,000 is likely to see his or her net annual profit collapse from :2,160 a year to just :960. (www.theguardian.com)

Տնտեսական իրադարձություններն արժևորման նշույթավորում են ստանում նաև իրատեսական, հավանական լինելու կամ չլինելու տեսակետից, ինչպես հետևյալ օրինակներում՝

If developing countries sustain their growth, and the income of the bottom 40% of their populations increases two percentage points faster every year than the overall average, the global poverty rate would fall to 2.7% by 2030. Such outsized gains for the lower tiers of society would, as they write, be “unprecedented, and most likely unrealistic”. (The Economist, February 28, 2015)

But rival ratings agency Moody's said the move to a slower pace of deficit reduction helped make the government's fiscal plans “more realistic and deliverable”. (www.theguardian.com)

How this will be phased in and what any redistributive element might look like is unclear, though it's pretty obvious that a system of “top ups and tariffs” will be much less redistributive than the current system. (The Financial Times, January 31, 2015)

But there are also real economic benefits from climate action, as many Latin American nations are already finding, demonstrating how a greener economy can work in practice both for growth and communities. (The Economist, November 28, 2015)

Those who oppose new taxes argue that once a new tax is in place it is almost impossible to get rid of it. (The Financial Times, January 31, 2015)

Արժևորման նշույթավորման մեկ այլ տեսակ է փոփոխությունն ըստ վերջինիս խոհամիտ լինելու փաստի գնահատելը՝

It is reasonable enough that online sales should be included in the underlying measure, but without changes in how companies present the figures, internet sales growth may soon obscure what is happening across the main business. (The Financial Times, January 7, 2015)

It is commercially rational to roll over, all the more so given how severely any failure to co-operate is punished. (The Economist, May 9, 2015)

Relying on the logic of the market makes perfect sense, but the logical approach is to first get rid of fossil fuel subsidies. (The Financial Times, January 31, 2015)

Հարաշարժության չափանիշով տնտեսական փոփոխություններն արժևորելու համար կիրառվում են լեզվամիավորներ, այդ թվում՝ ածականներ և բայեր, որոնք ցուցանում են տնտեսական աճ, անկում, գործունեության դանդաղում կամ հակառակը, ինչպես հետևյալ օրինակներում՝

Given China's rapid embrace of e-commerce, "marketers and agencies are having to adapt at warp speed to build capabilities and potential capabilities in this area," said Greg Paull, Hong Kong-based principal of agency-management consultancy R3 Worldwide. (www.adage.com)

Prices were pushed up by the rising cost of electricity and resurgence in petrol prices. (www.bbc.com)

The obvious risks would seem to be a financial meltdown in China, a collapse of the eurozone, or a severe crisis in emerging economies as the dollar strengthens, US interest rates rise and capital flees. (The Financial Times, January 28, 2015)

The Number Jumped 60% From Last Year; It's a Good Sign for Consumer Spending. (www.adage.com)

"We all need to be careful about the economic situation in Greece. Our common goal is to enhance growth." (The Financial Times, January 31, 2015)

...As such, he lobbied strenuously against a rule U.S. regulators were drafting that would require banks to disclose a lot more about asset-backed securities like those that had just torpedoed the economy. (www.reuters.com)

The UK economy has slowed after poor overseas trade figures put a record drag on growth, leaving household spending to drive the recovery and casting further doubt on George Osborne's hopes that strong tax receipts will help him hit ambitious budget targets. (www.theguardian.com)

BHP, which is listed in London and Australia, has seen its shares fall sharply in the wake of the disaster and as commodity prices have weakened in recent months. (www.theguardian.com)

After a rebound in the economy in 2010, growth decelerated every year since then. (Bloomberg, February, 2015)

Unfortunately, however, that quick response nearly exhausted governments' economic arsenals. (The Economist, June 13, 2015)

Տնտեսական աշխարհում փոփոխությունները հանրության կողմից ընկալվում և դասակարգվում են նաև ըստ անհատի (անհատների) հուզական արժեհամակարգի՝ ստանալով տարբեր երանգավորումներ. վատ, հոռետեսական, անհանգստացնող, վտանգավոր, վախեցնող կամ հակառակը՝

There was also bad news for the chancellor in the detail of the latest GDP figures which showed growth of 0.5% in the third quarter of the year, down from 0.7% in the second quarter. (www.theguardian.com)

Landlords are in shock after a second huge tax assault on buy to let by the chancellor which will force investors to pay thousands more in stamp duty on new properties – on top of the loss of tax reliefs unveiled in July. (www.theguardian.com)

A large proportion of the :27bn improvement in the public finances comes from a correction in the model that the OBR uses to predict the government's VAT take. It decided that it was being too pessimistic about how much would be raised through VAT. (www.bbc.com)

The chancellor's hopeless offers of assistance extend into the distance. (www.theguardian.com)

Before the spending review, councils in England and Wales were anxiously modeling cuts to their spending of between 25% and 40%, and worrying about increases in demand for the services they have to provide as a matter of law, which are forecast to add :10bn to their costs by 2020. (www.theguardian.com)

Inflation that is a little too high is a lot less dangerous for an economy than premature rate rises are. (The Economist, June 13, 2015)

Combining the three measures yields a worrying picture. (The Economist, June 13, 2015)

Italy allegedly ran out of fiscal space during the crisis. Yet its borrowing costs, which rose to alarming levels in 2011, actually began falling in 2012, after investors became convinced that the European Central Bank would buy Italian debt if necessary. (The Economist, June 13, 2015)

The market was very happy when the Federal Reserve at the end of last year emphasized it would be “patient” when it comes to raising interest rates. (The Financial Times, January 28, 2015)

Լեզվաբանական տեսանկյունից հետաքրքիր է տնտեսական իրադարձության ամբողջական անվանումը համաիրադարձային լեզվամիավորներով, քանզի վերջիններիս իմաստաբանական համակարգում արդեն իսկ առկա են արժևորող նշույթներ, որոնց շնորհիվ էլ վերջիններս օգտագործվում են՝ որակավորելու իրադարձությունն առավել սեղմ, բայց միևնույն ժամանակ՝ չափազանց բովանդակալից: Օրինակ՝ ներքոհիշյալ նախադասության մեջ լրագրողը, կիրառելով turmoil գոյականը, որի սահմանումն է՝ a state of extreme confusion or agitation; commotion or tumult, ընթերցողին իրազեկում է համաշխարհային տնտեսությունում առկա քառսային վիճակի մասին՝ հաղորդելով, որ այս իրադրությունը հետևանք է 2014 թվականին առաջացած և իր դիրքերը չգիջող ձգնաժամի, որի հետևանքով նավթի գինը մոտավորապես երկու անգամ անկում է գրանցել՝

Mr Sechin spoke at length about the current turmoil of the global market, saying that the speed of the 2014 crisis exceeded anything before. Oil has crashed from \$115 a barrel in June to just \$57 today. (The Independent, February, 2015)

The collapse of Lehman Brothers, a sprawling global bank, in September 2008 almost brought down the world's financial system. (The Economist, September 7, 2015)

Հոդվածը մեկնարկող այս նախադասությունում, collapse բառույթի շնորհիվ, որի սահմանումն է՝ a sudden, complete failure; breakdown, իսկույն ընկալում ենք, որ վերոնշյալ զարգացող բանկը հանկարծակի սնանկացել է, և, համապատասխանաբար, ստանում ենք տվյալ իրադրությանը համապատասխան բնութագրերի ամբողջական պատկերը:

Հաջորդիվ ունենք մի նախադասություն, որտեղ՝ folly բառով a foolish action, mistake, idea, etc. սահմանմամբ, որպես անմիտ սխալ ենք ընկալում կենտրոնական բանկի և այլ կարգավորող կազմակերպությունների կողմից մեծաքանակ վարկերի տրամադրումը, որի հետևանքով էլ տեղի էր ունեցել բանկի սնանկացումը՝

Central bankers and other regulators also bear blame, for it was they who tolerated this folly. (The Economist, September 7, 2015)

Վերլուծենք հաջորդ նախադասությունը: Boom լեզվամիավորի միջոցով, որի սահմանումն է՝ a time of economic prosperity, a sudden increase, as in popularity, լրագրողը միտում ունի ընթերցողին փոխանցելու տեղեկույթ Չինաստանի առցանց առևտրի կտրուկ աճի մասին և հաջորդիվ տեղեկացնում է նաև հայտնի ընկերությունների համագործակցության մասին, որն արդյունք է վերոնշյալ տնտեսական վերելքի՝

China's e-commerce boom also factored into a new partnership between Dentsu's Carat, Mondelez and internet giant Tencent to work together on data, research and content. (www.adage.com)

Այսպիսով՝ որոշ լեզվամիավորներ, որոնց իմաստաբանական համակարգը բնորոշվում է արժևորման որոշակի երանգավորմամբ, կիրառվում են՝ անվանելու տնտեսական աշխարհի մի շարք դրական կամ բացասական փոփոխություններ: Այս առումով, վերջիններս կատարում են համաիրադարձային բառույթների գործառույթ. անվանում են իրադարձությունը ընդհանրական ձևով: Միևնույն ժամանակ, այս բառերը որոշակի երանգավորում են տվյալ տնտեսական իրադարձությունը:

Անվանելով կամ որակելով տնտեսական իրադարձությունը նշույթավորված լեզվամիավորով՝ հոդվածի հեղինակն արդեն իսկ արժևորում և դասակարգում է այդ իրադարձությունը՝ տվյալ հասարակությանը համապատասխան արժեհամակարգի և կարծրատիպերի համաձայն: Այսկերպ լրագրողը նախապես սահմանում է տվյալ իրադարձության հետ կապված տեղեկույթի ընկալումը: Այս լեզվամիավորներից յուրաքանչյուրն առանցքային է արժևորումն իրականացնելու գործընթացում, քանզի այն ներունակորեն պարունակում է մի ամբողջական տեղեկություն, դատողություն և համոզման առանձնահատուկ ուժ, որն իր ուրույն ազդեցությունն է թողնում ընթերցողի վրա: Ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց առանձնացնելու տնտեսական իրողություններին հատուկ արժևորման սանդղակներ, որոնք են՝ կարևորության, օգտակարության/արդյունավետության, կայունության/անկայունության, չափի, կարգի, իրատեսության/հավանականության, խոհամտության, հարաշարժության, հուզական երանգավորման չափանիշները:

ЛУСИНЕ АРУТЮНЯН

Доцент кафедры "Языков" АГУЭ,
кандидат филологических наук

Оценка экономических событий в СМИ.– Оценка является важной составляющей любого экономического события. В данной статье делается попытка определить оценочную маркированность событий и выявить наиболее существенные оценочные компоненты, характеризующие экономические реалии. Проведенный анализ фактического материала, взятого из источников СМИ, позволил выделить следующие группы оценочных маркеров, таких как важность, продуктивность, стабильность/нестабильность, размер, ряд, вероятность, рациональность, динамичность и эмоциональность. Представленные языковые средства оценки экономического события раскрывают его специфику и способы его языковой репрезентации в текстах СМИ, которые позволяют автору статьи, в некоторой степени, предопределить отношение читателя к той или иной экономической ситуации.

Ключевые слова: экономические события, оценка экономических событий, оценочная маркированность экономических событий, языковые средства репрезентации оценки.

LUSINE HARUTYUNYAN

Associate Professor at the Chair of
"Languages" at ASUE, PhD in Philology

Evaluation of Economic Events in Mass Media.– The element of evaluation is considered to be one of the most important factors of any economic event. The present paper addresses the basic types of evaluation markers inherent in economic events. The analysis has shown that the common semantic groups for economic event evaluation are importance, usefulness, stability/instability, size, level, likelihood, rationality, dynamism, and emotionality. The linguistic tools of economic event evaluation identify its characteristic features and define the linguistic units applied for its representation in print media, which, in their turn, give a unique opportunity to the author of the article to predetermine the reader's attitude towards the current economic changes.

Key words: economic events, evaluation of economic events, evaluation semantic groups, linguistic means of economic event evaluation.